ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«____» _____ 2024թ. N _____- Ա

ՈՐՈՇՈՒՄ

«ԹԻՎ 19 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, «ԵՐԵՎԱՆԻ «ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ» ՄԱՆԿԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՑՄԱՆ ՁԵՎՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 15-րդ, 18-րդ, 20-րդ հոդվածներով և 67-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ և 23-րդ կետերով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. «Թիվ 19 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունն անվանափոխել «Մալաթիա-Սեբաստիա առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության:

2. Հաստատել «Թիվ 19 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

3. «Մալաթիա-Սեբաստիա» մանկական առողջության կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպել՝ միացնելով «Թիվ 19 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը (անվանափոխված՝ «Մալաթիա-Սեբաստիա առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն):

4. Սահմանել, որ «Մալաթիա-Սեբաստիա» մանկական առողջության կենտրոն փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդը «Թիվ 19 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունն է (անվանափոխված՝ «Մալաթիա-Սեբաստիա առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն), վերջինիս են անցնում միացված իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտին համապատասխան:

5. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սահմանված կարգին համապատասխան ապահովել «Մալաթիա-Սեբաստիա» մանկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության վերակազմակերպման գործընթացի իրականացումը՝ այդ թվում՝ միացման պայմանագրի և փոխանցման ակտի հաստատումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված

Կազմված է 18.12.2024թ. և բաղկացած է 2 թերթից

Տպագրված է ընդամենը 4 օրինակ

ՕՐԻՆԱԿ _____

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Երևան քաղաքի ավագանու

___ . _____ 2024թ.

թիվ _____-Ա որոշմամբ

Երևանի քաղաքապետ՝

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁՆԱՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ
25.01.2002թ.
գրանցման համար՝ **222.120.00027**
հարկ վճարողի հաշվառման համար՝
01806173
21.05.2010թ.
գրանցված կանոնադրության
Թիվ ——— փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կողմից
“_____”_____ 2024 թ.

Աշխատակից՝

_____ _____

«ԹԻՎ 19 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ»
փակ բաժնետիրական ընկերության
Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
(փոփոխություն)

2024թ.

1. «ԹԻՎ 19 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության (այսուհետ՝ Կանոնադրություն) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կանոնադրության տիտղոսաթերթի վրա «ԹԻՎ 19 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» բառերը փոխարինել «ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» բառերով.

2) Կանոնադրության 1.1-ին կետում ««ԹԻՎ 19 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» փակ բաժնետիրական ընկերությունը (հետագայում ընկերություն)» բառերը փոխարինել «ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերությունը (նախկին անվանումը՝ «ԹԻՎ 19 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» փակ բաժնետիրական ընկերություն, հետագայում՝ Ընկերություն)» բառերով.

3) Կանոնադրության 1.7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1.7. Ընկերության ֆիրմային անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետրական ընկերություն

կրճատ՝ «ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ԱԿ» ՓԲԸ

ռուսերեն լրիվ՝ Закрытое Акционерное Общество " ЦЕНТР ЗДОРОВЬЯ МАЛАТИЯ-СЕБАСТИЯ "

կրճատ՝ ЗАО " ЦЗ МАЛАТИЯ-СЕБАСТИЯ"

անգլերեն լրիվ՝ “MALATIA-SEBASTIA HEALTH CENTER” Closed joint-stock company

կրճատ՝ “MALATIA-SEBASTIA HC” Closed J-S Company»:

2. Սույն փոփոխությունը հանդիսանում է «ԹԻՎ 19 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» փակ բաժնետիրական ընկերության 21.05.2010 թվականին գրանցված կանոնադրության բաղկացուցիչ մասը:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ «ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ» ՄԱՆԿԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՑՄԱՆ ՁԵՎՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ««ԹԻՎ 19 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ» ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվող ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատությունների /այսուհետ՝ պոլիկլինիկա/ ֆինանսական վիճակի բարելավման և առողջացման ծրագրի շրջանակներում նախատեսվում է ֆինանսական վատ վիճակում գտնվող Երևանի ենթակայության փոքր /0-15000 ազգաբնակչություն սպասարկող/ պոլիկլինիկաները և արտահիվանդանոցային ծառայություններ մատուցող ընկերությունները վերակազմակերպել միացման ճանապարհով, մասնավորապես՝ նախատեսվում է միավորել Երևանի ենթակայության «Մալաթիա-Սեբաստիա» առողջության կենտրոն ՓԲԸ և «Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն, որոնք սպասարկում են.

hh	Բուժհաստատության անվանում	Ընդամենը բնակչություն, այդ թվում՝	18 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց թիվ	Մինչև 18 տարեկան անձանց թիվ
1	«Մալաթիա-Սեբաստիա» ԱԿ ՓԲԸ	14.870	-	14.870
2	«Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ	84.653	63.859	20.794

Վերոնշյալ վերակազմակերպման արդյունքում Մալաթիա-Սեբաստիա համայնքում կձևավորվի ավելին քան 99.500 ազգաբնակչություն սպասարկող խառը տիպի մեծ առողջության կենտրոն, որը հնարավորություն կտա մեկ տեղում ապահովել պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում մատուցվող բոլոր արտահիվանդանոցային ծառայությունները ամբողջ ընտանիքի համար:

Միաժամանակ՝ ստեղծելով խառը տիպի պոլիկլինիկա՝ հնարավորություն է ստեղծվում սպասարկվող ազգաբնակչության թվի ավելացման՝ ի հաշիվ «Մալաթիա-Սեբաստիա» ԱԿ ՓԲԸ-ի մեծահասակ ազգաբնակչության ընտանիքի մինչև 18 տարեկան անձանց: Նշված վերակազմակերպումը կնպաստի բուժհաստատության ֆինանսատնտեսական գործունեության բարելավմանը, ինչը իր հերթին կնպաստի բուժհաստատության բնականոն գործունեության ապահովմանը, մատուցվող բժշկական ծառայությունների բարելավմանը, հնարավորություն կընձեռի ստեղծել լրացուցիչ ֆոնդեր բուժհաստատության հետագա զարգացման համար:

Հայտնում եմ նաև, որ «Մալաթիա-Սեբաստիա» ԱԿ ՓԲԸ-ի շենքային պայմանները չեն բավարարում խառը տիպի մեծ պոլիկլինիկա ծավալելու համար, իսկ «Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից զբաղեցրած ք. Երևան, Անդրանիկի փ. 5/9 հասցեում գտնվող շենքի պայմանները, գտնվելու վայրը բավարարում են վերոնշյալ

պոլիկլինիկաների ազգաբնակչության սպասարկման համար: Վերակազմակերպման արդյունքում կբացառվի բնակչության արտահոսքը այլ բուժհաստատություններ: Միաժամանակ նշեմ, որ «Մալաթիա-Սեբաստիա» ԱԿ և «Թիվ 19» պոլիկլինիկա ՓԲԸ-ները գտնվում են մոտավորապես 100 մետր հեռավորության վրա, ուստի անհրաժեշտություն չկա գրեթե միևնույն տարածքում ունենալ երկու համայնքապատկան մանկական պոլիկլինիկաներ: Տեղեկացնեմ, որ «Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն տրվել է հավատարմագրային կառավարման, այդ իսկ պատճառով, հնարավորություն չի եղել երկու պոլիկլինիկաների վերամիավորումը:

Հարկ եմ համարում նշել, որ «Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն Երևան համայնքին կառավարմանը վերադառնալուց հետո կրկնակի անգամ ավելացել են ստացված մուտքերը, մասնավորապես՝ 2024 թվականի հոկտեմբերի 11-ից մինչև հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում մուտքերը կազմել են 2480.0 հազար դրամ, ապա սույն թվականի նոյեմբերի 11-ից մինչև նոյեմբերի 30-ը մուտքերը կազմել են 4166.4 հազար դրամ, կամ մուտքերի աճը կազմել է 1686.4 հազար դրամ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ակնհայտ է դառնում, որ Ընկերությունը չունի համապատասխան ֆինանսական և կադրային ռեսուրսներ՝ ազգաբնակչությանը անհրաժեշտ ծավալի և որակի բժշկական ծառայություններ մատուցելու, ինչպես նաև սեփական ռեսուրսներով զարգանալու համար, ուստի՝ անհրաժեշտ է վերջինս վերակազմակերպել՝ այլ բուժհաստատության հետ միացման ճանապարհով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ